ԻԱԿ մշակած օրինագծեր 2006

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (4 դեկտեմբերի 2001 թվականի, ՀՕ-272) 37-րդ հոդվածի երկրորդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով.

«է1) «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ այլ իրավական ակտերին համապատասխան տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (18 ապրիլի 2003 թվականի, ՀՕ-528) 148-րդ հոդվածի վերնագրում «ներկայացնելուց» բառը փոխարինել «տրամադրելուց» բառով, իսկ առաջին մասում «ներկայացնելուց» եւ «ներկայացնելը» բառերը համապատասխանաբար փոխարինել «տրամադրելուց» եւ «տրամադրելը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (7 մայիսի 2002 թվականի, ՀՕ-337, այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«121) «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ այլ իրավական ակտերին համապատասխան տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն»

Հոդված 2. Օրենքի 33-րդ հոդվածի յոթերորդ կետը «արխիվից» բառից հետո լրացնել «,ինչպես նաեւ տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ այլ իրավական ակտերին համապատասխան» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 դեկտեմբերի 2004 թվականի, ՀՕ-43) 5-րդ հոդվածի «դ» կետը «հրապարակայնությունը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ տեղեկատվության ազատության ապահովումը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի) 189.7-րդ հոդվածի առաջին մասը «ապօրինաբար» բառից հետո լրացնել «չհրապարակելը կամ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (1997թ. դեկտեմբերի 27, ՀՕ-186) 20 հոդվածը լրացնել նոր՝ 43 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«**43.** Բացառությամբ սույն հոդվածի 32, 32.1, 41 կետերով նախատեսված տեղեկությունների եւ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 հոդվածի 2 մասով նախատեսված դեպքերի՝ պետական մարմինների եւ հիմնարկների կողմից տեղեկությունների տրամադրման համար 10 էջը գերազանցող պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 2 տոկոսի չափով, էլեկտրոնային կրիչի կամ ձայներիզի համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով, տեսաերիզի համար՝ բազային տուրքի կրկնապատիկի չափով, այլ կրիչի համար՝ բազային տուրքի չափով»:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (1997թ. դեկտեմբերի 26, ՀՕ-185) 10 հոդվածը 9 մասից հետո լրացնել նոր 91 մասով հետեւյալ բովանդակությամբ.

«**91.** Բացառությամբ սույն հոդվածի 9 մասով նախատեսված փաստաթղթերի եւ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 հոդվածի 2 մասով նախատեսված դեպքերի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկություններ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) 10 էջը գերազանցող պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ 0-ից մինչեւ բազային տուրքի 2 տոկոսի չափով,

բ) էլեկտրոնային կրիչի կամ ձայներիզի համար՝ 0-ից մինչեւ բազային տուրքի 30 տոկոսի չափով,

գ) տեսաերիզի համար՝ 0-ից մինչեւ բազային տուրքի կրկնապատիկի չափով,

դ) այլ կրիչի համար՝ 0-ից մինչեւ բազային տուրքի չափով»:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

2003թ. սեպտեմբերի 23-ի «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել պետական կառավարման մարմիններում դասակարգվող տեղեկությունների շրջանառության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության նախարարներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին, Երևանի քաղաքապետին և գործադիր իշխանության այլ մարմինների ղեկավարներին՝ սույն որոշմամբ հաստատված տեղեկությունների շրջանառության կարգի դրույթներին համապատասխան՝

ա) կազմակերպել տեղեկությունների գրանցումը, դասակարգումը, պահպանումը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրումը Հայաստանի Հանրապետության նախարարություններում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններում, Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում, Երևանի քաղաքապետարանում և գործադիր իշխանության այլ մարմիններում,

բ) մեկամսյա ժամկետում հաստատել տեղեկությունների շրջանառության կարգերը,

գ) մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը և (կամ) փոփոխվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում հանրային հեռահաղորդակցության ցանցի՝ տվյալ մարմնի կողմից վարվող կայքէջում և (կամ) մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունները:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք Հայաստանի Հանրապետության նախարարություններում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններում, Երևանի քաղաքապետարանում և գործադիր իշխանության այլ մարմիններում սույն որոշմանը համապատասխան տեղեկությունների շրջանառության կարգի դրույթների պահպանման մասին:

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարության 2005 թվականի
---------- N որոշման

ԿԱՐԳ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է պետական կառավարման մարմիններում տեղեկությունների շրջանառության կարգը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունում տեղեկությունների շրջանառության կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը:

3. Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում տեղեկությունների շրջանառության կազմակերպման և գործավարության վարման համար պատասխանատու է ստորաբաժանման ղեկավարը:

4. Գաղտնի տեղեկությունների շրջանառությունն իրականացվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի դեկտեմբերի 10-ի N 626 որոշմամբ հաստատված հրահանգի պահանջներին համապատասխան:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

5. Դասակարգման են ենթակա Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները.

5.1. ՀՀ կառավարության գործունեության իրավական հիմքը կազմող օրենքները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը, այդ թվում՝ ՀՀ կառավարության գործունեության և գործավարության կարգերը:

5.2. ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ինչպես նաև դրանց գործողությունը դադարեցնելու մասին ակտերը:
5.3. ՀՀ կառավարության կողմից կնքված (ստորագրված) միջազգային պայմանագրերի ցանկը և տեքստերը:
5.4. ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելու մասին դատարանների վճիռների վերաբերյալ տեղեկությունները:
5.5. ՀՀ կառավարության նիստերի օրակարգերը, ինչպես նաև ՀՀ կառավարության նիստերի նյութերի և արդյունքների մասին տեղեկությունները:
5.6. ՀՀ կառավարության կողմից ընդունված նպատակային ծրագրերի մասին ընդհանուր տեղեկությունները, ներառյալ՝ ծրագրի անվանումը, նպատակները, հիմնական խնդիրները, պատվիրատուները, հիմնական կատարողները, ֆինանսավորումը, իրականացման ժամկետները և սպասվող արդյունքները:
5.7. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և պետական բյուջեի կատարման հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունները:
5.8. ՀՀ կառավարության կողմից ստեղծված համակարգող և խորհրդակցական մարմինների կազմի, խնդիրների և գործառույթների մասին տեղեկությունները:
5.9. ՀՀ կառավարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների խնդիրների և գործառույթների վերաբերյալ տեղեկությունները:
5.10. ՀՀ կառավարության իրավաստեղծ գործունեության մասին տեղեկությունները, ներառյալ՝ իրավաստեղծ աշխատանքների ծրագրերը, ինչպես նաև դրանց կատարման մասին տեղեկությունները, օրենսդրական նախաձեռնության կարգով Ազգային ժողով ներկայացված օրենքների նախագծերը, պատգամավորների կողմից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարության եզրակացությունները:
5.11. ՀՀ վարչապետի և կառավարության անդամների, ինչպես նաև ՀՀ կառավարության պատվիրակությունների պաշտոնական և աշխատանքային այցելությունների մասին տեղեկությունները:
5.12. ՀՀ կառավարության նստավայրում կազմակերպված միջոցառումների, ներառյալ՝ նիստերի, խորհրդակցությունների, հանդիպումների, մամուլի ասուլիսների, սեմինարների, «կլոր սեղանների» մասին տեղեկությունները:
5.13. ՀՀ վարչապետի և կառավարության անդամների պաշտոնական ելույթների տեքստերը:
5.14. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական միավորումների, քաղաքական կուսակցությունների, արհեստակցական միությունների և այլ, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ կառավարության համագործակցության մասին տեղեկությունները:
5.15. ՀՀ կառավարությունում քաղաքացիների և կազմակերպությունների դիմումների, առաջարկությունների և տեղեկություններ ստանալու մասին հարցումների քննարկման ընթացքի, ներառյալ՝ ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկությունները:
5.16. ՀՀ կառավարության աշխատակազմում պետական ծառայության, ներառյալ՝ հանրային ծառայության անցնելու կարգի, թափուր պաշտոններում աշխատանքի անցնելու համար

թեկնածուներին ներկայացվող անհրաժեշտ որակավորման պահանջների, թափուր պաշտոնների և դրանք զբաղեցնելու վերաբերյալ մրցույթների պայմանների և արդյունքների մասին տեղեկությունները:

5.17. ՀՀ վարչապետի, կառավարության անդամների, պետական կառավարման մարմինների ղեկավարների, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների անունները, ազգանունները, հայրանունները և նրանց համաձայնությամբ՝ կենսագրական տվյալները:

5.18. ՀՀ կառավարությունում քաղաքացիների հետ աշխատանքի համար պատասխանատու ստորաբաժանման և տեղեկատու ծառայության հեռախոսահամարները, հասցեները և նրանց գործառույթների վերաբերյալ տեղեկությունները:

6. Դասակարգման են ենթակա պետական կառավարման մարմինների գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները.

6.1. Պետական կառավարման մարմինների գործունեության շրջանակը կարգավորող և դրանց իրավասությունը, խնդիրները և գործառույթները սահմանող օրենքները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության որոշումները և այլ նորմատիվ իրավական ակտերը:

6.2. Պետական կառավարման մարմինների ակտերը (որոշումները, հրամանները, կարգադրությունները, կարգերը, ցուցումները և այլն), այդ թվում՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև դրանց գործողությունը դադարեցնելու վերաբերյալ ակտերը:

6.3. Պետական կառավարման մարմինների ակտերն անվավեր ճանաչելու մասին դատարանների վճիռների վերաբերյալ տեղեկությունները:

6.4. ՀՀ միջազգային պայմանագրերի, միջգերատեսչական միջազգային պայմանագրերի և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացմանը պետական կառավարման մարմնի մասնակցության մասին տեղեկությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ցանկը, որոնց հետ համագործակցում է պետական կառավարման մարմինը:

6.5. Պետական կառավարման մարմնի կողմից պետական բյուջեի կատարման մասին տեղեկությունները:

6.6. Պետական կառավարման մարմնի պատվիրած կամ նրա կողմից կատարվող պետական նպատակային ծրագրերի իրականացման ընթացքի մասին տեղեկությունները:

6.7. Պետական կառավարման մարմնի կողմից կնքված պայմանագրերի ցանկը և էական պայմանները:

6.8. Պետական կառավարման մարմնի կողմից մշակվող (մշակված) օրենքների, պետական նպատակային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի վերաբերյալ տեղեկությունները:

6.9. Օրենքով նախատեսված դեպքերում պետական կառավարման մարմինների իրավական ակտերի փորձաքննության և գրանցման վերաբերյալ տեղեկությունները:

6.10. Պետական կառավարման մարմնի իրավասությանը վերապահված բնագավառը բնութագրող հիմնական ցուցանիշները և դրանց աճի դինամիկան:

6.11. Օրենսդրությանը համապատասխան պետական կառավարման մարմնի կողմից սահմանվող դիմումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը:

6.12. Պետական կառավարման մարմնի ղեկավարների և պաշտոնական պատվիրակությունների պաշտոնական և աշխատանքային այցելությունների վերաբերյալ տեղեկությունները:
6.13. Պետական կառավարման մարմնի և նրա տարածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվող պաշտոնական միջոցառումների, ներառյալ՝ նիստերի, հանդիպումների, մամուլի ասուլիսների և «կլոր սեղանների» վերաբերյալ տեղեկությունները:
6.14. Պետական կառավարման մարմնի և նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնական ելույթների տեքստերը:
6.15. Պետական կառավարման մարնի գործունեության վերաբերյալ վերլուծական զեկույցները և տեսակետները:
6.16. Պետական այլ մարմինների, հասարակական միավորումների, քաղաքական կուսակցությունների, արհեստակցական միությունների և այլ, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների հետ պետական կառավարման մարմնի, նրա տարածքային մարմինների և նրան ենթակա կազմակերպությունների (գերատեսչությունների) համագործակցության մասին տեղեկությունները:
6.17. Քաղաքացիների և իրավաբանական անձանց դիմումների, առաջարկությունների և տեղեկություններ ստանալու մասին հարցումների քննարկման արդյունքները, այդ թվում՝ ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունները:
6.18. Պետական կառավարման մարմնի, նրա տարածքային մարմինների և նրան ենթակա կազմակերպությունների կողմից մշակված կանխատեսումների մասին տեղեկությունները:
6.19. Պետական կառավարման մարմնի և նրա տարածքային մարմինների կողմից մշակված պաշտոնական վիճակագրական տեղեկությունները:
6.20. Պետական կառավարման մարմնի, նրա տարածքային մարմինների և նրան ենթակա կազմակերպությունների կողմից անցկացվող մրցույթների, աճուրդների, տենդերների, փորձաքննությունների և այլ միջոցառումների մասին տեղեկությունները, այդ թվում՝ դրանց անցկացման պայմանները, դրանցում ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցության կարգը, պետական կարիքների համար ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) համար նախատեսված մրցութային հանձնաժողովների կազմերը և նիստերի արձանագրությունները:
6.21. Պետական կառավարման մարմնի, նրա տարածքային մարմինների և նրան ենթակա կազմակերպությունների վարույթում գտնվող ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգերի և տվյալների բանկերի ցանկերը:
6.22. Պետական կառավարման մարմնի մասնակցությամբ իրականացվող ծրագրերով միջազգային տեխնիկական օգնության միջոցների ծախսման ուղղությունների մասին տեղեկությունները:
6.23. Պետական կառավարման մարմնի, նրա տարածքային մարմինների և նրան ենթակա կազմակերպությունների կողմից՝ իրենց լիազորությունների շրջանակում անցկացված ստուգումների, ինչպես նաև այդ մարմիններում և կազմակերպություններում անցկացված ստուգումների մասին տեղեկությունները:
6.24. Արտակարգ իրավիճակներից բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության վիճակի մասին տեղեկությունները, ներառյալ՝ բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցները, արտակարգ իրավիճակների կանխատեսումները, ինչպես նաև օրենքով

նախատեսված դեպքերում պետական կառավարման մարմնի կողմից հրապարակման ենթակա այլ տեղեկությունները:

6.25. Պետական կառավարման մարմնում հանրային ծառայության մասին տեղեկությունները, ներառյալ՝ քաղաքացիների՝ հանրային ծառայության անցնելու կարգը, թափուր պաշտոնների ցանկը, թափուր պաշտոնների զբաղեցման համար թեկնածուներին ներկայացվող որակավորման պահանջները, թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթների պայմանները և արդյունքները:

6.26. Պետական կառավարման մարմնի, նրա կառուցվածքային ստորաբաժանումների, արտասահմանյան ներկայացուցչությունների, տարածքային մարմինների և նրան ենթակա կազմակերպությունների ղեկավարների անունը, ազգանունը, հայրանունը և նրանց համաձայնությամբ՝ կենսագրական տվյալները:

6.27. Պետական կառավարման մարմնի կառուցվածքը, նրա կառուցվածքային ստորաբաժանումների խնդիրների և գործառույթների վերաբերյալ տեղեկությունները, պետական կառավարման մարմնի, նրա կառուցվածքային ստորաբաժանումների և նրան ենթակա կազմակերպությունների հեռախոսահամարները և հասցեները, այդ թվում՝ էլեկտրոնային:

6.28. Պետական կառավարման մարմնի՝ քաղաքացիների դիմումների, առաջարկությունների և հարցումների քննարկման համար պատասխանատու ստորաբաժանման, նրա տարածքային ստորաբաժանումների և նրանց ենթակա կազմակերպությունների հեռախոսահամարները, հասցեները, այդ թվում՝ էլեկտրոնային:

7. Պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող՝ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերում սահմանված տեղեկությունները նրանց աշխատակազմերի քարտուղարությունների կողմից գրանցվում և դասակարգվում են ապարատածրագրային միջոցներով, զուգահեռ՝ նաև մատյանների օգնությամբ, որտեղ արտացոլվում է տեղեկության համառոտ բովանդակությունը, նյութական կրիչը և տեղեկության տնօրինման համար իրավասու պաշտոնատար անձը:

- Գրանցված փաստաթղթային կրիչով տեղեկության 1-ին էջի ներքևի աջ անկյունում դրվում է դրոշմակնիք, որի մեջ նշվում են մտից (ելից) գրանցման համարը և ամսաթիվը:
- Ստացված, ուղարկված և պետական կառավարման մարմնի կողմից մշակված տեղեկության գրանցման համարը բաղկացած է քարտուղարության դասակարգիչներով թղթակցին տրված պայմանանշից և հերթական համարից:
- Պետական կառավարման մարմնի ընդունած կամ նրա կողմից ստացված իրավական ակտի գրանցման համարը՝ բաղկացած այդ ակտի ընդունման ամսաթվի և օրենսդրությամբ սահմանված կարգով տրված համարից:

8. Պետական կառավարման մարմնի կողմից տնօրինվող տեղեկությունների պահպանությունն իրականացվում է արխիվային փաստաթղթերի պահպանության համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼԸ

9. Տեղեկություններ ստանալու մասին գրավոր հարցումների (այսուհետ՝ հարցում) գործավարությունը պետական կառավարման մարմիններում, նրանց տարածքային մարմիններում և նրանց ենթակա կազմակերպություններում ու հիմնարկներում տարվում է գործավարության մյուս ձևերից առանձնաբար, որի կատարման հսկողությունը դրվում է դրա համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի վրա:

10. Ստացված հարցումը գրանցվում է պետական կառավարման մարմնի աշխատակազմի քարտուղարությունում՝ ապարատածրագրային միջոցներով, զուգահեռ՝ նաև մատյանների օգնությամբ, որտեղ արտացոլվում են փաստաթղթով պահանջվող տեղեկության անվանումը, հարցումի շարժը և կատարման ընթացքը:

- Գրանցված հարցումի 1-ին էջի ներքևի աջ անկյունում դրվում է դրոշմակնիք, որի վրա նշվում են մտից գրանցման համարը և ամսաթիվը:
- Ստացված հարցման մտից գրանցման համարը բաղկացած է քարտուղարության դասակարգիչներով թղթակցին տրված պայմանանշից և նրա հերթական համարից:

11. Նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված կրկնական հարցումներին տրվում է գրանցման հերթական համար, իսկ ապարատածրագրային միջոցում, զուգահեռ՝ նաև մատյանում նշվում է նախորդ հարցումի գրանցման համարը: Կրկնական հարցումների վերին աջ անկյունում նշվում է «Կրկնական» բառը: Հարցումը կրկնական չի համարվում, եթե դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված հերթական հարցումն է, սակայն՝
ա) նախորդ հարցմամբ դիմողին տրամադրվել է ոչ հավաստի կամ ոչ լիարժեք տեղակություն,
բ) պահանջվող տեղեկությունը օրենքով սահմանված կարգով ենթակա է անհապաղ հրապարակման կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացման, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

12. Կրկնական հարցմանը, ինչպես նաև այն հարցումներին, որոնց հեղինակի ինքնության վերաբերյալ տվյալները կեղծ են կամ որոնք ստորագրված չեն կամ չեն պարունակում դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության (աշխատանքի կամ ուսումնական հաստատության) հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ նրա անվանումը, գտնվելու վայրը), ընթացք չի տրվում: Մյուս բոլոր հարցումներն ուղարկվում են պետական կառավարման մարմնի այն պաշտոնատար անձին, որը պետական կառավարման մարմնի տնօրինության տակ գտնվող տեղեկությունների դասակարգիչին համապատասխան անմիջականորեն իրավասու է տնօրինել այդ տեղեկությունը (այսուհետ՝ պաշտոնատար անձ):

13. Պաշտոնատար անձը հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում դիմողին տրամադրում է հարցման մեջ նշված տեղեկության պատճենը կամ դրա հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը, կամ գրավոր տեղեկացնում է դիմողին տեղեկության տրամադրման ժամկետի հետաձգման պատճառների, այդ թվում՝ պետական տուրքը մուծելու անհրաժեշտության և

տեղեկության տրամադրման վերջնական ժամկետի մասին, կամ գրավոր մերժում է տրամադրել տեղեկությունը:

Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է մուծել պետական տուրք, ապա տեղեկությունը դիմողին է տրվում պետական տուրքը մուծելու մասին անդորրագիրը պաշտոնատար անձին ներկայացվելուց հետո:

Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում:

14. Եթե պետական կառավարման մարմինը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա պաշտոնատար անձը տվյալ հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում՝ նշել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:
Եթե պետական կառավարման մարմինը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա պաշտոնատար անձը դիմողին տալիս է տվյալների այն մասը, որը պետական կառավարման մարմինն ունի, իսկ հնարավորության դեպքում՝ հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:
15. Հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, և դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա հարցման պատասխանը տրվում է պետական կառավարման մարմնին առավել ընդունելի նյութական կրիչով:
Տեղեկության պատճենը ստանալու փոխարեն, դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր հարցումը:
16. Պաշտոնատար անձը կարող է օրենքով սահմանված ժամկետում մերժել տեղեկության տրամադրումը, եթե դիմողը սույն կարգի 13-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված կարգով տեղեկացվելուց հետո 24 ժամվա ընթացքում իրեն չի ներկայացնում տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը վճարելու մասին անդորրագիրը, կամ պահանջվող տեղեկությունը՝
ա) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
բ) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,
գ) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
դ) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
ե) խախտում է հեղինակային և հարակից իրավունքը:

Հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում պաշտոնատար անձն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը) , ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ ----------2005թ. N ----- Ն

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ (ՊԱՏՃԵՆԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Սահմանել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ կառավարության
_____թ. N ----Ն որոշման

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ (ՊԱՏՃԵՆԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները և կազմակերպությունները (այսուհետ՝ տեղեկություն տնօրինողներ) տեղեկություն են տրամադրում՝ սույն կարգին համապատասխան:

2. Տեղեկությունը տրամադրվում է տեղեկություն փնտրելու և ստանալու նպատակ ունեցող անձին՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) համապատասխան տեղեկություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմումի (այսուհետ՝ հարցում) հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Եթե հարցմամբ պահանջվում է այնպիսի տեղեկություն, որի տրամադրման համար Օրենքով նախատեսված է պետական տուրք, տեղեկություն տնօրինողը հարցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում հարցումը ներկայացնողին ծանուցում է հարցվող տեղեկության տրամադրման

համար օրենքով նախատեսված պետական տուրքի չափի մասին՝ ծանուցման մեջ նշելով տեղեկության տրամադրման ժամկետն Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետին համապատասխան հետաձգելու մասին:

Հարցում ներկայացրած անձը պետական տուրքի վճարման անդորրագիրը տեղեկությունը տնօրինողին է ներկայացնում սույն կետով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: